«ԱԳԱԹ» ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԽԱՐԱՆԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԵՆՔ

Կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց ուղղակի և անուղղակի թիրախավորումը 2026թ. ՀՀ խորհրդարանական ընտրությունների մեդիա խոսույթում

Մեդիա մշտադիտարկման համապարփակ զեկույց

Մշտադիտարկման ժամանակահատված՝ 2026թ. ապրիլի 15 - հունիսի 7

Գյումրի, 2026

Բովանդակություն

1. Ամփոփագիր

Սույն զեկույցն ամփոփում է 2026թ. ՀՀ խորհրդարանական ընտրությունների նախընտրական և ընտրական շրջանում (2026թ. ապրիլի 15 – հունիսի 7) հայաստանյան մեդիա տիրույթում և սոցիալական հարթակներում իրականացված մշտադիտարկման արդյունքները: Մշտադիտարկման ընթացքում դիտարկվել է շուրջ 1,500 բովանդակային միավոր, որոնցից մեթոդաբանորեն առանձնացվել և խորությամբ վերլուծվել է 115-ը: Ուսումնասիրության առանցքում կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց ուղղակի և անուղղակի թիրախավորումն է՝ ատելության խոսքի, խտրական ու ոչ զգայուն խոսքի դրսևորումների միջոցով:

Կենտրոնական բացահայտում. տվյալները վեր են հանում մի կայուն մեխանիզմ, որը զեկույցում անվանում ենք **«կողմնակի խարան»**: Դեպքերի ճնշող մեծամասնությունում խոսքի ուղղակի թիրախը քաղաքական դերակատարն է (դեպքերի 43.5%-ում՝ տղամարդ քաղաքական գործիչ), սակայն հարվածի «զինամթերքը» խոցելի խմբի ինքնությունն է. հոգեկան առողջության ախտորոշումները, մտավոր և ֆիզիկական հաշմանդամությունը, կնոջ սեռականությունն ու «բարոյականությունը» ծառայում են որպես քաղաքական հակառակորդին նվաստացնելու գործիք: Արդյունքում վերլուծված նյութերի 55.7%-ում անուղղակի թիրախավորված են հաշմանդամություն ունեցող անձինք, ևս զգալի մասում՝ կանայք հանրային դաշտում: Այսպիսով, քաղաքական բևեռացման «հաշիվը» փաստացի վճարում են այն խմբերը, որոնք ընտրապայքարի կողմ չեն:

Հիմնական քանակական արդյունքները հետևյալն են.

- Վերլուծված 115 միավորից 106-ում (92.2%) արձանագրվել է ատելության խոսքի կամ խտրական խոսքի որևէ դրսևորում. գերակշռում են վիրավորանքը, նվաստացումը (58.3%) և պիտակավորումը (13.9%), առկա են նաև ապամարդկայնացման (5.2%) և բռնության սպառնալիքի (3.5%) դեպքեր:
- Բովանդակության գերակշռող բնույթը հեղինակազրկումն է (79.1%). ատելության խոսքը նախընտրական շրջանում առաջին հերթին քաղաքական հակառակորդի վարկաբեկման տեխնոլոգիա է:
- Ատելության խոսքի հիմքերի եռյակը՝ քաղաքական հայացքներ (31.3%), հաշմանդամություն և առողջական վիճակ (28.7%), սեռ/գենդեր (20.0%), ցույց է տալիս, որ քաղաքական անհանդուրժողականությունն արտահայտվում է հենց խոցելի խմբերի խարանի լեզվով:
- Հիմնական հարթակը Facebook-ն է (62.6%), որին հաջորդում են Telegram-ը (13.0%), առցանց լրատվամիջոցները (12.2%) և YouTube-ը (8.7%):

- Նման խոսքի արտահայտողների շրջանակը համատարած է. շարքային օգտատերեր (32.2%), կուսակցություններ և քաղաքական գործիչներ (22.6%), լրատվամիջոցներ և լրագրողներ (14.8%), բլոգերներ/ինֆլուենսերներ (13.9%), անանուն էջեր (9.6%) և, ինչը հատկապես մտահոգիչ է, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ՝ այդ թվում ՀՀ Պաշտպանության նախարարությունը (4.3%):
- Վերլուծված նյութերը միայն ֆիքսված դիտումների մասով կուտակել են ավելի քան 1.6 մլն դիտում. ամենադիտված նյութը (669,000 դիտում) պաշտոնյայի կողմից կին լրագրողի նկատմամբ սեքսիստական վիրավորանքի և ֆիզիկական խոչընդոտման տեսանյութն է:

Որակական վերլուծությունը փաստում է, որ էյբլիստական (ableist) բառապաշարը («գիժ», «շիզոֆրենիկ», «դեբիլ», «տկարամիտ», «դաուն», «քոռ», «կուզիկ») հայաստանյան քաղաքական խոսույթում գործում է որպես համընդհանուր նորմ. այն կիրառում են և՛ իշխանության, և՛ ընդդիմության ներկայացուցիչները, լրատվամիջոցները՝ ընդհուպ վերնագրերում, իսկ առանձին դեպքերում՝ նաև պետական կառույցները պաշտոնական հաղորդակցության մեջ: Գենդերային ուղղությամբ գերակշռում է սեքսուալացված վիրավորանքը («պոռնիկ», «բոզ», «լիրբ»), որը կիրառվում է որպես ունիվերսալ քաղաքական միավոր՝ ուղղված ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց՝ վերջիններիս «կանացիացնելու» տրամաբանությամբ: Առանձին մտահոգիչ միտում է կին լրագրողների մասնագիտական գործունեության խոչընդոտումը գենդերային նվաստացման ուղեկցությամբ:

Զեկույցն ամփոփվում է եզրակացություններով և քաղաքականության առաջարկների փաթեթով՝ առանձին հասցեագրված լրատվամիջոցներին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և պետական ինստիտուտներին:

2. Ներածություն և համատեքստ

2026 թվականի խորհրդարանական ընտրությունները Հայաստանի համար ընթացան քաղաքական խորը բևեռացման, անվտանգային անորոշության և տեղեկատվական ինտենսիվ դիմակայության պայմաններում: Նախընտրական շրջանն ուղեկցվեց հանրային խոսույթի կտրուկ կոշտացմամբ. քաղաքական ուժերի, դրանց առաջնորդների և աջակիցների միջև փոխադարձ վարկաբեկման ալիքը տարածվեց ինչպես ավանդական լրատվամիջոցներում, այնպես էլ՝ առավել մեծ թափով, սոցիալական հարթակներում: Հենց այս միջավայրում է ձևավորվում այն լեզուն, որով հասարակությունը խոսում է իշխանության, ընդդիմության և, ի վերջո, միմյանց մասին:

Կանայք և հաշմանդամություն ունեցող անձինք այս խոսույթում հայտնվում են կրկնակի խոցելի դիրքում: Մի կողմից նրանք կարող են լինել թիրախավորման ուղղակի օբյեկտ՝ որպես քաղաքական գործիչ, լրագրող, ակտիվիստ կամ պարզապես քաղաքացի: Մյուս կողմից, և սա սույն ուսումնասիրության կարևորագույն շերտն է, նրանց ինքնությունը՝ սեռը, առողջական վիճակը, հաշմանդամությունը, օգտագործվում է որպես վիրավորանքի «հումք» նույնիսկ այն դեպքերում, երբ խոսքի անմիջական հասցեատերը բոլորովին այլ անձ է: Երբ քաղաքական գործչին անվանում են «հոգեկան հիվանդ», «դեբիլ» կամ «պոռնիկ», հարվածն առաջին հերթին ստանում է ոչ թե այդ գործիչը, այլ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց, մտավոր հաշմանդամություն ունեցող մարդկանց և կանանց համայնքը, որի գոյությունն այդպիսով նորմատիվորեն ամրագրվում է որպես «վատթարագույն հնարավոր վիճակ»:

Ընտրական շրջանն այս տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի երեք պատճառով: Նախ՝ ընտրապայքարը բազմապատկում է հանրային խոսքի ծավալն ու հուզական լարվածությունը, հետևաբար՝ նաև խտրական խոսքի արտադրությունը: Երկրորդ՝ ընտրությունները քաղաքացիական մասնակցության առանցքային պահն են, և խոսույթային միջավայրը, որը կանանց ներկայացնում է «անբարոյական», իսկ հաշմանդամությունը՝ «պատիժ», ուղղակիորեն նեղացնում է այդ խմբերի մասնակցության տարածքը՝ ընտրվելու, լուսաբանելու և ընտրելու իրավունքների իմաստով: Երրորդ՝ հենց ընտրությունների օրը բացահայտվում են նաև մասնակցության ինստիտուցիոնալ խոչընդոտները՝ ընտրատեղամասերի անմատչելիությունից մինչև խոցելի խմբերի քվեի հնարավոր շահարկում:

Սույն զեկույցը պատրաստվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպության կողմից: Զեկույցի նպատակն է փաստահեն հիմք ստեղծել մեդիա էկոհամակարգի, քաղաքացիական հասարակության և պետական ինստիտուտների համար՝ տեղեկատվական տիրույթում խտրականության և ատելության խոսքի նվազեցմանն ուղղված գործնական քայլերի մշակման համար: Զեկույցը համադրում է քանակական (վիճակագրական) և որակական (խոսույթային) վերլուծությունը, դրանց խաչաձև համադրությունը, ինչպես նաև դեպքերի ուսումնասիրությունը, որոնք կառուցված են

ոչ թե առանձին հրապարակումների, այլ վարքագծային կրկնվող օրինաչափությունների շուրջ:

3. Մեթոդաբանություն

3.1. Ընդհանուր մոտեցումը և ժամանակային շրջանակը

Մշտադիտարկումն իրականացվել է խառը մեթոդաբանությամբ՝ համադրելով քանակական (վիճակագրական) և որակական (վերլուծական) գործիքները: Մշտադիտարկման հիմնական ժամանակահատվածն ընդգրկում է **2026թ. ապրիլի 15-ից հունիսի 7-ը**՝ համընկնելով խորհրդարանական ընտրությունների ակտիվ նախընտրական փուլի, պաշտոնական քարոզարշավի և քվեարկության օրվա հետ:

3.2. Տվյալների հավաքագրումը

Տվյալների հավաքագրումն իրականացվել է երեք փոխլրացնող ուղիներով.

- **Թվային և ԱԲ մոնիտորինգ.** մեդիա տիրույթի և սոցիալական հարթակների (Facebook, Instagram, Telegram, YouTube, TikTok) ավտոմատացված և կիսաավտոմատացված սքանավորում արհեստական բանականությամբ օժտված մշտադիտարկման համակարգերի (Gerulata, LetsData) միջոցով:
- **Google-ի խորացված որոնում.** որոնողական հատուկ օպերատորների (site:, intitle:, OR, AND, ճշգրիտ արտահայտություններ) կիրառում նախընտրական շրջանի բանալի բառերի համադրությամբ՝ առցանց լրատվամիջոցների արխիվներից թիրախային նյութերը վերհանելու համար:
- **Ավանդական և օնլայն մեդիայի մշտադիտարկում.** հայաստանյան առաջատար լրատվական կայքերի բովանդակության շարունակական դիտարկում:

3.3. Ընտրանքը և կոդավորումը

Մշտադիտարկման ընթացքում դիտարկվել է շուրջ **1,500 բովանդակային միավոր**, որոնցից մեթոդաբանական չափանիշներով (թիրախային ուղղություններին առնչություն, ընտրական համատեքստ, խնդրահարույց խոսք) առանձնացվել և խորությամբ վերլուծվել է **115-ը (ընդհանուրի 7.66%-ը)**: Յուրաքանչյուր միավոր ենթարկվել է բազմաչափ կոդավորման հետևյալ դաշտերով. հրապարակման ամսաթիվ, հարթակ, աղբյուր և հղում, դերակատարի տեսակ, թիրախային ուղղություն, ուղղակի և անուղղակի թիրախավորված խումբ/անձ, սոցիալական մեդիա ցուցիչներ (դիտումներ, հավանումներ, մեկնաբանություններ, տարածումներ), շոշափված ոլորտ, բովանդակության բնույթ (խախտման տեսակ), խոսույթային (նարատիվային) շեշտադրումներ, ատելության խոսքի բնույթ և հիմք, ինչպես նաև բովանդակության նկարագրություն և որակական վերլուծություն:

Որակական վերլուծությունը հիմնվել է 14 առանցքային նարատիվների վրա (մարդու իրավունքներ, ազգային արժեքներ, կրոն/եկեղեցի, արևմտյան արժեքներ, արտաքին ազդեցություն, ինստիտուտների հանդեպ անվստահություն, քաղաքական/քաղաքացիական բևեռացում և այլն): Ատելության խոսքը դասակարգվել է ըստ դրսևորման բնույթի (վիրավորանք, ապամարդկայնացում, սպառնալիք, կարծրատիպավորում, ծաղր/բուլինգ, բացառում, պիտակավորում և այլն) և ըստ

հիմքերի (սեռ/գենդեր, հաշմանդամություն/առողջական վիճակ, քաղաքական հայացքներ, սեռական կողմնորոշում, ազգություն և այլն):

3.4. Սահմանափակումներ

115 նյութի ընտրանքը նպատակային է, ոչ պատահական, հետևաբար ստացված տոկոսային բաշխումները բնութագրում են վերլուծված կորպուսը և չեն կարող մեխանիկորեն ընդհանրացվել ողջ մեդիա դաշտի վրա. դրանք ցույց են տալիս խնդրահարույց խոսքի կառուցվածքը, ոչ թե դրա ընդհանուր տարածվածությունը: Սոցիալական մեդիա ցուցիչները հասանելի են եղել ոչ բոլոր միավորների համար (դիտումների տվյալ կա 99 միավորի դեպքում). հարթակների տեխնիկական սահմանափակումները թույլ չեն տալիս ամբողջական համադրելի վիճակագրություն: Վերջապես, որոշ նյութեր մշտադիտարկման պահից հետո հեռացվել կամ սահմանափակվել են, ինչը բնորոշ է ընտրական շրջանի դինամիկ բովանդակությանը:

4. Քանակական վերլուծություն

4.1. Հարթակների բաշխումը

Վերլուծված կորպուսի գրեթե երկու երրորդը Facebook հարթակից է, ինչը արտացոլում է ինչպես հարթակի գերիշխող դերը հայաստանյան քաղաքական հաղորդակցության մեջ, այնպես էլ դրա համեմատաբար թույլ մոդերացիոն միջավայրը հայերեն բովանդակության նկատմամբ: Ուշագրավ է Telegram-ի երկրորդ տեղը. այս հարթակում խտրական խոսքը հաճախ շրջանառվում է անանուն ալիքների միջոցով՝ առանց հաշվետվողականության որևէ մեխանիզմի:

Աղյուսակ 1. Վերլուծված միավորների բաշխումն ըստ հարթակների (N=115)

Հարթակ	Քանակ	Տոկոս
Facebook	72	62.6%
Telegram	15	13.0%
Առցանց լրատվամիջոց	14	12.2%
YouTube	10	8.7%
TikTok	3	2.6%
Instagram	1	0.9%

4.2. Դերակատարները. ո՞վ է խոսում

Խտրական և ոչ զգայուն խոսքի արտահայտումը բաշխված է դերակատարների ողջ սպեկտրով: Ամենամեծ խումբը շարքային օգտատերերն են (32.2%), սակայն կազմակերպված կամ ինստիտուցիոնալ դերակատարների՝ կուսակցությունների/քաղաքական գործիչների, լրատվամիջոցների, բլոգերների, անանուն էջերի և պետական մարմինների հանրագումարը կազմում է դեպքերի շուրջ 65%-ը: Սա սկզբունքային նշանակություն ունի. խնդրահարույց խոսքը չի կարող ներկայացվել որպես զուտ «ցանցային ամբոխի» երևույթ. այն մեծապես գեներացվում, լեգիտիմացվում և ուժեղացվում է հանրային պատասխանատվություն կրող սուբյեկտների կողմից: Ընդ որում, կարևոր է ուշադրություն դարձնել այն հանագամանքի վրա, որ խնդրահարույց խոսքը կարող է հնչել քաղաքական դերակատարի կողմից, ապա տիրաժավորվել առցանց լրատվամիջոցների, անանուն էջերի և օգտատերերի կողմից: Հարկ է ի նկատի ունենալ, որ ստորև ներկայացված քանակական տվյալները կարող են խաչադրվել:

Աղյուսակ 2. Բաշխումն ըստ դերակատարի տեսակի (N=115)

Դերակատար	Քանակ	Տոկոս
Օգտատեր	37	32.2%
Կուսակցություն / քաղաքական գործիչ	26	22.6%
Լրատվամիջոց / լրագրող	17	14.8%
Հանրային դերակատար / բլոգեր / ինֆլուենսեր	16	13.9%

Դերակատար	Քանակ	Տոկոս
Անանուն էջ / անանուն հաշիվ	11	9.6%
Պետական կամ ՏԻ մարմիններ	5	4.3%
Այլ	3	2.6%

Հատկապես մտահոգիչ է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հայտնվելը այս ցանկում (5 դեպք). դրանց թվում են պաշտոնյայի կողմից կին լրագրողի նկատմամբ վիրավորանքն ու ֆիզիկական խոչընդոտումը, ինչպես նաև պետական կառույցի և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական հաղորդակցության և դրանց ներկայացուցիչների կողմից տարածվող հայտարարությունների մեջ էյբլիստական ձևակերպման կիրառությունը (տե՛ս դեպքեր 4 և 6):

4.3. Թիրախային ուղղությունները

Կորպուսի 58.3%-ը վերաբերում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ուղղությանը, 25.2%-ը՝ գենդերային հարցերին/կանանց իրավունքներին, 1.7%-ը՝ երկուսին միաժամանակ, իսկ 14.8%-ը հարակից խոսույթներ են (թիրախավորում սեռական կողմնորոշման, ազգության, տարիքի և այլ հիմքերով), որոնք դիտարկվում են զեկույցի 8-րդ բաժնում՝ որպես ընդհանուր թունավոր խոսույթային միջավայրի համատեքստ:

Աղյուսակ 3. Բաշխումն ըստ թիրախային ուղղության (N=115)

Ուղղություն	Քանակ	Տոկոս
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ	67	58.3%
Գենդերային հարցեր / կանանց իրավունքներ	29	25.2%
Հարակից խոսույթներ («Այլ»)	17	14.8%
Երկուսը միասին	2	1.7%

4.4. Ուղղակի և անուղղակի թիրախավորումը

Ուղղակի և անուղղակի թիրախների համադրումը բացահայտում է զեկույցի կենտրոնական օրինաչափությունը: Ուղղակի թիրախների ցանկը գլխավորում են տղամարդ քաղաքական գործիչները (50 դեպք՝ 43.5%), ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները (14 դեպք) և քաղաքական ուժերը (13 դեպք), մինչդեռ հաշմանդամություն ունեցող անձինք ուղղակի թիրախ են ընդամենը 6 դեպքում: Անուղղակի թիրախավորման պատկերը հակառակն է. հաշմանդամություն ունեցող անձինք անուղղակիորեն թիրախավորված են 64 դեպքում (55.7%), կանայք հանրային դաշտում՝ 9, կին քաղաքական գործիչներն ու լրագրողները՝ ևս 6 դեպքում: Այսինքն՝ խոցելի խմբերը հիմնականում տուժում են ոչ թե իրենց հասցեագրված խոսքից, այլ ուրիշների դեմ մղվող քաղաքական պայքարի լեզվից:

Աղյուսակ 4. Ուղղակի թիրախավորված խմբերը (առաջատար կատեգորիաներ, N=115, հնարավոր են մեկից ավելի թիրախներ)

Ուղղակի թիրախ	Դեպք	Տոկոս
Տղամարդ քաղաքական գործիչ	50	43.5%
Ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներ	14	12.2%
Քաղաքական ուժ	13	11.3%
Կին լրագրող	7	6.1%
Կին քաղաքական գործիչ	7	6.1%
Կանայք հանրային դաշտում	5	4.3%
Հաշմանդամություն ունեցող անձինք	6	5.2%
Փոքրամասնություններ (ԼԳԲՏՔ+, ազգային, կրոնական)	4	3.5%

Աղյուսակ 5. Անուղղակի (ոչ զգայուն խոսքով) թիրախավորված խմբերը (առաջատար կատեգորիաներ)

Անուղղակի թիրախ	Դեպք	Տոկոս
Հաշմանդամություն ունեցող անձինք (ներառյալ ենթախմբերը)	68	59.1%
Ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներ	13	11.3%
Կանայք հանրային դաշտում	9	7.8%
Քաղաքական ուժ	7	6.1%
Տղամարդ քաղաքական գործիչ	6	5.2%
Կին քաղաքական գործիչ / կին լրագրող	6	5.2%
Լրատվամիջոց	4	3.5%
Տարեցներ	3	2.6%

4.5. Ատելության խոսքի բնույթը և հիմքերը

Վերլուծված 115 միավորից 106-ում (92.2%) արձանագրվել է ատելության խոսքի կամ խտրական խոսքի որևէ դրսևորում. 9 դեպքում այն բացակայում է (դրանք հիմնականում իրավունքների խախտումների լրագրողական լուսաբանումներ են): Գերակշռում է վիրավորանքը/նվաստացումը՝ դեպքերի 58.3%-ը, ինչը ցույց է տալիս, որ խնդրահարույց խոսքի հիմնական «ժանրը» ոչ թե գաղափարական ատելության կառուցված քարոզն է, այլ առօրեականացված, սովորութային դարձած վիրավորական լեզուն: Միաժամանակ առկա են առավել ծանր դրսևորումներ՝ ապամարդկայնացում (6 դեպք), ֆիզիկական բռնության սպառնալիք կամ բռնության կոչ (4 դեպք), ատելության հրահրում և իրավունքների ժխտում (3 դեպք):

Աղյուսակ 6. Ատելության խոսքի դրսևորման ձևերը (N=115)

Դրսևորման ձև	Դեպք	Տոկոս
Վիրավորանք / նվաստացում	67	58.3%
Պիտակավորում	16	13.9%
Ծաղր, սարկազմ, բուլինգ	7	6.1%
Ապամարդկայնացում (դեհումանիզացիա)	6	5.2%
Սպառնալիք, բռնության կոչ	4	3.5%
Ատելության հրահրում / իրավունքների ժխտում	3	2.6%
Այլ ձևեր (բացառում, կարծրատիպավորում, վախի տարածում)	3	2.6%
Բացակայում է	9	7.8%

Ատելության խոսքի հիմքերի բաշխումը բացահայտում է «կողմնակի խարանի» մեխանիզմի վիճակագրական հիմքը. ամենատարածված հիմքը քաղաքական հայացքներն են (31.3%), որին անմիջապես հաջորդում են հաշմանդամությունը/առողջական վիճակը (28.7%) և սեռը/գենդերը (20.0%): Գործնականում այս երեք հիմքերը հաճախ միահյուսված են. քաղաքական հակակրանքն արտահայտվում է հաշմանդամության կամ գենդերի լեզվով:

Աղյուսակ 7. Ատելության խոսքի հիմքերը (N=115)

Հիմք	Դեպք	Տոկոս
Քաղաքական հայացքներ, կուսակցական պատկանելություն	36	31.3%
Հաշմանդամություն և առողջական վիճակ	33	28.7%
Սեռ (կին/տղամարդ) և գենդեր	23	20.0%
Ազգություն և քաղաքացիություն	6	5.2%
Սեռական կողմնորոշում	5	4.3%
Արտաքին տեսք / տարիք / այլ	3	2.6%
Բացակայում է	9	7.8%

4.6. Բովանդակության բնույթը և նարատիվային ֆոնը

Խախտման տեսակների շարքում ճնշող գերակշռությամբ առաջատար է հեղինակազրկումը՝ 79.1%: Սա հաստատում է, որ ընտրական շրջանի խտրական խոսքը ֆունկցիոնալ է. այն ոչ այնքան ինքնանպատակ ատելություն է, որքան քաղաքական մրցակցի վարկաբեկման տեխնոլոգիա, որի նյութը խոցելի խմբերի խարանն է: Նարատիվային մակարդակում նույն պատկերն է. դեպքերի 59.1%-ի ֆոնային նարատիվը քաղաքական/քաղաքացիական բևեռացումն է, որին հաջորդում են ինստիտուտների հանդեպ անվստահությունը (8.7%), ազգային արժեքները (7.0%), մարդու իրավունքները (7.0%) և արտաքին/օտարերկրյա ազդեցության ջանքերը (6.1%):

Աղյուսակ 8. Բովանդակության բնույթը (խախտման տեսակը) և գերակշռող նարատիվները

Ցուցանիշ	Առաջատար արժեքը	Դեպք / տոկոս
Խախտման տեսակ	Հեղինակազրկում	91 / 79.1%
	Մանիպուլյացիա / պրոպագանդա / ապատեղեկատվություն	9 / 7.8%
Նարատիվ	Քաղաքական/քաղաքացիական բևեռացում	68 / 59.1%
	Անվստահություն ինստիտուտների հանդեպ	10 / 8.7%
	Ազգային արժեքներ	8 / 7.0%
	Մարդու իրավունքներ	8 / 7.0%
	Արտաքին ազդեցության ջանքեր	7 / 6.1%

4.7. Ընդգրկումը և ներգրավվածությունը

Դիտումների տվյալ 115 նյութից առկա է 99 միավորի համար, որոնց հանրագումարը կազմում է ավելի քան **1.6 միլիոն դիտում** (մեդիանը՝ 972), գրանցվել է նաև շուրջ 49,400 հավանում/ռեակցիա, 8,000-ից ավելի մեկնաբանություն և գրեթե 3,000 տարածում: Ընդգրկման բաշխումը կտրուկ անհամաչափ է. տասը ամենադիտված նյութերը կուտակում են ընդհանուր դիտումների շուրջ 84%-ը: Կարևոր է, որ ամենաբարձր ընդգրկում ունեցող նյութերը հենց ամենախնդրահարույցներն են. վարկանիշային աղյուսակը գլխավորում են պաշտոնյայի սեքսիստական վիրավորանքը կին լրագրողի նկատմամբ (669 հազ.), քաղաքական գործչին «հոգեկան խնդիրներ» վերագրող տեսանյութը (145 հազ.), լրատվամիջոցի՝ «տկարամիտ» եզրույթով վերնագրված հրապարակումը (139 հազ.) և «բոզի տղա» արտահայտությամբ քաղաքական գրառումը (112 հազ.):

Աղյուսակ 9. Ամենաբարձր ընդգրկում ունեցող 5 նյութերը

Աղբյուր / հարթակ	Դիտում	Բովանդակություն (հակիրճ)
Ազատություն ռադիոկայան / Facebook	669,000	Սպիտակի համայնքապետի տեղակալի վիրավորանքը կին լրագրողի նկատմամբ («Յեքա կնիկ ես»)
Narek Karapetyan / Facebook	145,000	Քաղգործչին «հոգեկան խնդիրներ» վերագրող տեսանյութ («Սևանի հոգեբուժարան» մոտիվ)
Oragir.News / Facebook	139,000	«Տկարամիտ», «տգետ», «ախմախ» եզրույթները ՁԼՄ վերնագրում
Hayk Toroyan / Facebook	112,000	«Բոզի տղա» սեքսիստական հայհոյանքը որպես քաղաքական պիտակ
YouTube	90,000	Հավաքի ժամանակ կնոջն ուղղված «Այ պոռնիկ, ինչքա՞ն են քեզ վճարել» վիրավորանքը

Այս բաշխումը ցույց է տալիս, որ խտրական խոսքը ոչ միայն տարածված է, այլև մրցունակ. հենց խարանող, սկանդալային ձևակերպումներն են ապահովում ամենամեծ լսարանը, ինչը ալգորիթմային տրամաբանությամբ խրախուսում է դրանց վերարտադրությունը:

5. Որակական վերլուծություն

Որակական վերլուծությունը նպատակ ունի բացահայտել, թե ինչպես է աշխատում խտրական խոսքը. ինչ բառապաշարով, ինչ հռետորական գործառույթներով և ինչ տրամաբանությամբ են խոցելի խմբերի ինքնությունները ներգրավվում քաղաքական խոսույթի մեջ: Վերլուծությունը կառուցված է երկու հիմնական ուղղություններով՝ հաշմանդամություն և գենդեր, որոնց դրսևորումները, ինչպես ցույց կտա 6-րդ բաժինը, ենթարկվում են միևնույն կառուցվածքային տրամաբանությանը:

5.1. Հաշմանդամությունը որպես քաղաքական զենք

5.1.1. Էյբլիստական բառապաշարի երեք շերտերը

Վերլուծված կորպուսում էյբլիստական (հաշմանդամության հիմքով խտրական) բառապաշարը հանդես է գալիս երեք հստակ տարբերակվող շերտով: Առաջինը **հոգեկան առողջության շերտն է**՝ «գիժ», «շաշ» (իմաստայինը՝ ոչ ֆիզիկական), «հոգեկան հիվանդ», «շիզոֆրենիկ», «շիզո», «մոլագար», «կիսահիվանդ», «սեզոնային գիժ», «թղթով գիժ», «ի ծնե շիզոֆրենիկ», «դեմենցիա», «հիվանդ ուղեղ» և այլն: Սա ամենազանգվածային շերտն է, որի թիրախում առավել հաճախ երկրի բարձրագույն ղեկավարությունն է, սակայն այն կիրառվում է բոլոր ուղղություններով՝ իշխանությունից ընդդիմություն և հակառակը: Երկրորդ շերտը **մտավոր զարգացման շերտն է**՝ «դեբիլ», «իդիոտ», «տկարամիտ», «մտավոր հետամնաց», «ծալապակաս», «խփնված», «թերզարգացած», «անուղեղ», «դաուն»: Այս բառերից շատերը բժշկական կամ սոցիալական եզրույթներ են, որոնք հանրային խոսքում վերածվել են սովորութային հայհոյանքի: Երրորդ շերտը **ֆիզիկական և զգայական հաշմանդամության շերտն է**՝ «քոռ», «կուզիկ», «խուլ ու կույր», «խուլ ու համրեր», «անդամահատված», «հաշմանդամ»՝ որպես անկարողության փոխաբերություն:

5.1.2. Հռետորական գործառույթները

Ըստ գործառույթի՝ էյբլիստական խոսքը կորպուսում հանդես է գալիս չորս հիմնական դերում: Առաջինը **հեղինակազրկումն է**. քաղաքական հակառակորդին հոգեկան կամ մտավոր «ախտորոշում» վերագրելը նրան հանում է ռացիոնալ քաղաքական դաշտից. «հիվանդի» հետ բանավիճել պետք չէ, նրան պետք է «բուժել» կամ «մեկուսացնել»: Այստեղից էլ կորպուսում կրկնվող «հոգեբուժարանի» մոտիվը՝ Սևանի հոգեբուժարանը «վերանորոգելու» խոստումից մինչև «Նիկոլ Փաշինյանի անվան հոգեբուժարան» ծաղրական ձևակերպումը: Երկրորդ գործառույթը **սպառնալիքն ու պատիժն է**. հաշմանդամությունը ներկայացվում է որպես հնարավոր հաշվեհարդարի հեռանկար («անգործ կամ հաշմանդամ կդառնաք», «հաշմանդամ կսարքեմ»): Երրորդը **փոխաբերությունն է**. պետության, ինստիտուտների կամ քաղաքականության «վատ վիճակը» նկարագրվում է հաշմանդամության լեզվով («հաշմանդամ երկիր», «խուլ ու կույր» իրավապահներ, «անդամահատված» զինանշան): Չորրորդը **գործիքայնացումն է**. հաշմանդամություն ունեցող անձինք՝ հատկապես պատերազմի վետերանները, ներկայացվում են որպես կամազուրկ զանգված, որին

քաղաքական ուժերը «քարշ են տալիս» հանրահավաքների կամ որի վիճակը «շահագործում են» հակառակորդները:

5.1.3. Նորմալացման շղթան

Որակական ընթերցումը բացահայտում է էյբլիստական խոսքի վերարտադրության հստակ շղթա: Քաղաքական գործիչը հնչեցնում է խարանող ձևակերպում («հոգեկանի մենաշնորհ», «ծալապակաս», «առերևույթ հոգեկան խանգարումներ ունի»): Լրատվամիջոցը ոչ միայն մեջբերում է այն, այլև հաճախ դարձնում վերնագիր՝ առանց խմբագրական հեռատեսության նշույլի, երբեմն էլ ինքն է գեներացնում նույն լեզուն («Շենգավիթում խուլ ու համրերի մի խումբ "անհամբեր" սպասում է...»): Մեկնաբանությունների դաշտում օգտատերերը շարունակում և սաստկացնում են. «դունի ծնունդ», «բոզի վիժվածք», «գժանոցից եք բերել», «GNA SATQI», «անողնաշար ղարաբաղցի»: Արդյունքում մեկ արտահայտությունը բազմապատկվում է հարթակների և ձևաչափերի միջով՝ ամեն փուլում ավելի կոշտանալով: Այս շղթայում լրատվամիջոցի դերը կրիտիկական է. հենց ԶԼՄ վերնագիրն է խարանող ձևակերպումը դարձնում «նորություն» և ապահովում դրա զանգվածային ընդգրկումը (139,000 դիտում «տկարամիտ» վերնագրով տեսանյութի դեպքում):

5.1.4. Խարանի բովանդակային հետևանքը

Բոլոր երեք շերտերի ընդհանուր հայտարարն այն է, որ հաշմանդամությունը հանրային խոսույթում ամրագրվում է որպես արժեզրկման բացարձակ չափանիշ. «ամենավատ բանը», որ կարելի է ասել մարդու մասին: Երբ հոգեկան ախտորոշումը հայհոյանք է, ապա հոգեկան առողջության խնդիր ունեցող իրական մարդը լռելյայն դառնում է «հայհոյանքի կրող»: Սա ունի շոշափելի սոցիալական հետևանքներ. խորանում է ինքնախարանը, նվազում է օգնություն փնտրելու պատրաստակամությունը, ամրապնդվում է հանրային-քաղաքական կյանքից հաշմանդամություն ունեցող անձանց բացառումը («Հոգեկան խնդիրներ ունեցող մարդիկ Հայաստանում վարչապետ չեն լինելու» ձևակերպումը բացահայտ ժխտում է մի ամբողջ խմբի քաղաքական մասնակցության իրավունքը):

5.2. Գենդերային խոսույթները. սեքսուալացված վիրավորանքից մինչև մասնագիտական լռեցում

5.2.1. Սեքսուալացված վիրավորանքի բառամթերքը

Գենդերային ուղղության կորպուսում գերակշռում է կնոջ սեռականությունն ու «բարոյականությունը» թիրախավորող բառապաշարը՝ «պոռնիկ», «բոզ», «լիրբ», «դիշովկա», «անբարոյական», «կույս» (հեգնական չակերտներով), «կթվորուհի», «ագարկա»: Այս լեքսիկոնը գործում է երկու ռեժիմով: Առաջին ռեժիմում թիրախը կինն է՝ քաղաքական գործիչ, լրագրող, ակտիվիստ, արվեստագետ կամ պարզապես տեսանյութում հայտնված քաղաքացի. նրա հանրային դիրքորոշումն արժեզրկվում է սեռական պիտակի միջոցով («Այ պոռնիկ, ինչքա՞ն են քեզ վճարել»): Երկրորդ ռեժիմում թիրախը տղամարդ է, սակայն վիրավորանքի նյութը կրկին կնոջ սեռականությունն է. տղամարդ քաղաքական գործչին անվանում են «լիրբ դիշովկա», համեմատում «անբարոյական կնոջ» հետ, հայհոյում մոր հասցեին («բոզի տղա»,

«մերդ բոզ ա»): Երկու ռեժիմներն էլ սնվում են միևնույն կարծրատիպից. կնոջ արժեքը հանգեցվում է սեռական «մաքրությանը», որի «խախտումը» ունիվերսալ նվաստացման աղբյուր է:

5.2.2. Կանանց մասնագիտական ինքնության արժեզրկումը

Կորպուսում առանձնանում է կանանց մասնագիտական գործունեության արժեզրկման հստակ գիծ, որի ամենացայտուն թիրախը կին լրագրողներն են: Պաշտոնյայի «Յեքա կնիկ ես…» արտահայտությունը, որն ուղեկցվել է լրագրողի տեսախցիկին հարվածով, լրագրողի մասնագիտական կարգավիճակը նվազեցնում է կենցաղային-կարծրատիպային «կնիկ» կատեգորիայի. կինը հանրային տարածքում ընկալվում է ոչ թե իր մասնագիտական դերով, այլ սեռով: Քաղաքական գործչի «անբարոյական» պիտակը և «բանտում կփտես» սպառնալիքը կին լրագրողի հասցեին միավորում են գենդերային նվաստացումն ու մասնագիտական ահաբեկումը: Կին քաղաքական գործիչներին ուղղված «տանձից ու խնձորից խոսիր» հորդորը նույն տրամաբանության «փափուկ» տարբերակն է. կնոջ տեղը «լուրջ» քաղաքական օրակարգից դուրս է:

5.2.3. Սեքսիզմը ինստիտուցիոնալ մակարդակում

Մտահոգիչ է, որ գենդերային անզգայուն խոսքի աղբյուր են նաև բարձրագույն ներկայացուցչական մարմնի (ԱԺ) անդամները: Կրծքով կերակրող մորը բերման ենթարկելու դեպքի շուրջ «կրծքերը ինդուլգենցիա չեն» ձևակերպումը, ինչպես և ի պատասխան ծավալված «սեքսի նախարարության» սարկաստիկ փոխհրաձգությունը («որևէ չբավարարված կին տանը չմնա») քաղաքական բանավեճը տեղափոխում են կնոջ մարմնի և սեռականության դաշտ՝ խորհրդարանական ամբիոնի հեղինակությամբ նորմալացնելով այդ տեղափոխությունը: Երբ սեքսիստական ձևակերպումը հնչում է օրենսդրի շուրթերից, այն դադարում է «ցանցային գռեհկություն» լինելուց և դառնում քաղաքական հաղորդակցության ընդունելի ոճ:

5.2.4. Լռեցնող էֆեկտը

Գենդերային խոսույթների հանրագումարային ազդեցությունը կանանց հանրային մասնակցության «թանկացումն» է: Կորպուսում արձանագրված են դեպքեր, երբ հանրային դաշտում ակտիվ կնոջը հասցեագրվում են ոչ միայն սեքսուալացված վիրավորանքներ, այլև ապամարդկայնացնող համեմատություններ («ագռավ», «մողես», «սատանա») և ֆիզիկական բռնության ուղիղ սպառնալիքներ («աջ թիքեդ ականջդ կթողենք»): Մայրության և անձնական կյանքի շահարկումը («բա փողոցները հետույք տալուց չէր հիշում երեխաների մասին») ազդանշան է բոլոր կանանց. հանրային ակտիվությունը կարժենա անձնական արժանապատվության գին: Սա դասական լռեցնող (chilling) էֆեկտ է, որը նախընտրական շրջանում ուղղակիորեն աղքատացնում է ժողովրդավարական գործընթացը՝ կանանց մղելով ինքնագրաքննության կամ հանրային դաշտից դուրս գալու:

6. Քանակական և որակական տվյալների խաչաձև համադրություն

6.1. «Կողմնակի խարանի» մեխանիզմը թվերով

Քանակական և որակական շերտերի համադրումը թույլ է տալիս ճշգրիտ նկարագրել զեկույցի կենտրոնական մեխանիզմը: Քայլ առաջին. խոսքի շարժառիթը քաղաքական է. ատելության խոսքի ամենատարածված հիմքը քաղաքական հայացքներն են (31.3%), գերակշռող խախտման տեսակը՝ հեղինակազրկումը (79.1%), գերակշռող նարատիվը՝ բևեռացումը (59.1%): Քայլ երկրորդ. խոսքի գործիքը խարանն է. հիմքերի 28.7%-ը հաշմանդամությունն է, 20.0%-ը՝ սեռը/գենդերը, ընդ որում որակական ընթերցումը ցույց է տալիս, որ «քաղաքական հիմքով» կոդավորված դեպքերի մեծ մասում էլ վիրավորանքի բուն նյութը կրկին հոգեկան առողջության կամ սեռականության պիտակն է: Քայլ երրորդ. վնասը կրում է երրորդ կողմը. հաշմանդամություն ունեցող անձինք ուղղակի թիրախ են ընդամենը 6 դեպքում, սակայն անուղղակի թիրախ՝ 64-ում. հարաբերակցությունը մոտ 1:11 է: Կանանց դեպքում ուղղակի և անուղղակի թիրախավորումը առավել հավասարակշռված է, սակայն այստեղ էլ սեքսիստական լեզուն հաճախ կիրառվում է տղամարդկանց դեմ պայքարում՝ կրկին «կողմնակի» հարված հասցնելով կանանց որպես խմբի:

6.2. Ո՞վ, որտե՞ղ, ի՞նչ լեզվով

Դերակատար-ուղղություն խաչաձևումը ցույց է տալիս, որ հաշմանդամության ուղղությամբ խոսքի աղբյուրները հավասարաչափ բաշխված են բոլոր խմբերի միջև. օգտատերեր (19 դեպք), քաղաքական գործիչներ (14), լրատվամիջոցներ (14), բլոգերներ (9), անանուն էջեր (6): Այսինքն՝ էյբլիստական լեզուն համընդհանուր նորմ է, որի վերարտադրությանը մասնակցում են խոսույթի բոլոր մակարդակները: Գենդերային ուղղությամբ պատկերը մի փոքր այլ է. գերակշռում են օգտատերերը (13) և քաղաքական գործիչները (7), իսկ պետական պաշտոնյաների երեք դեպքն էլ հենց այս ուղղությունում են. ինստիտուցիոնալ դիրքից սեքսիզմը կորպուսում առավել տեսանելի է, քան ինստիտուցիոնալ էյբլիզմը (վերջինս առավել հաճախ հանդես է գալիս ոչ թե անձնավորված վիրավորանքի, այլ համակարգային անգործության և անզգայուն ձևակերպումների տեսքով):

Հարթակների կտրվածքով հաշմանդամության ուղղության դեպքերի 67%-ը Facebook-ում է, ինչը համընկնում է «նորմալացման շղթայի» որակական դիտարկման հետ. Facebook-ը այն միջավայրն է, որտեղ քաղաքական գործչի արտահայտությունը, ՁԼՄ վերնագիրը և օգտատերերի մեկնաբանությունները հանդիպում են միևնույն թելում՝ փոխադարձաբար ուժեղացնելով միմյանց: Telegram-ի դեպքերի զգալի մասը անանուն ալիքների արտադրանք է, որտեղ խոսքի կոշտությունն առավել բարձր է, իսկ հաշվետվողականությունը՝ զրոյական:

6.3. Ընդգրկումը և խարանի «շուկայականությունը»

Ներգրավվածության տվյալների համադրումը որակական բովանդակության հետ բացահայտում է անհանգստացնող օրինաչափություն. ամենաբարձր ընդգրկում ունեցող տասը նյութից ինը պարունակում են բացահայտ խարանող լեզու, ընդ որում դրանց թվում են և՛ պաշտոնյայի սեքսիստական վիրավորանքի լուսաբանումը (669 հազ. դիտում), և՛ էյբլիստական վերնագրով ԶԼՄ հրապարակումը (139 հազ.), և՛ շարքային օգտատերերի խարանող գրառումները (36-145 հազ.): Մեդիանային ընդգրկումը կորպուսում ընդամենը 972 դիտում է. այսինքն՝ խարանող բովանդակությունը ոչ թե հավասարաչափ է տարածվում, այլ առանձին «պայթյունավտանգ» դեպքերով գրավում է հսկայական լսարան: Սա նշանակում է, որ նույնիսկ քանակապես սահմանափակ խտրական խոսքը կարող է ձևավորել զանգվածային նորմ. մեկ վիրուսային «տկարամիտ» վերնագիրը լսարանին հասնում է հարյուր «կոռեկտ» հրապարակման փոխարեն:

6.4. Մեկնաբանությունների դաշտը որպես ուժեղացուցիչ

Մի շարք դեպքերում կոդավորված միավորի բուն տեքստից առավել ծանր բովանդակություն կրում է մեկնաբանությունների դաշտը: Քաղաքական գործչի «առերևույթ հոգեկան խանգարումներ» ձևակերպման տակ օգտատերերը թողնում են «մահվան ցանկություն», «շիզոֆրենիկ» վերնագրով տեսանյութի տակ՝ «քյաֆթառ», «գժանոցից եք բերել» արտահայտություններ, կին պատգամավորի խոսքի լուսաբանման տակ՝ «կին իրավունք չուներ կոչվելու» ձևակերպումներ: Սա հաստատում է, որ հրապարակային խարանող խոսքը գործում է որպես «թույլտվության ազդանշան». հանրային դեմքի կամ ԶԼՄ-ի կողմից սահմանի խախտումը մեկնաբանողների համար բացում է առավել կոշտ խոսքի տարածք:

6.5. Հակադիր միտումները

Կորպուսում առկա են նաև հակառակ ուղղության ազդանշաններ, թեև դրանք եզակի են: Արձանագրվել է խոսքի մշակույթը պաշտպանող օգտատիրոջ գրառում, որը դատապարտում է քաղաքական դաշտի ագրեսիվ հռետորաբանությունը, ինչպես նաև պատգամավորի հրապարակային անդրադարձ «դաուն» եզրույթը որպես վիրավորանք օգտագործելու անթույլատրելիությանը: Հատկանշական է սակայն, որ վերջին դեպքում նույն տեքստում քաղաքական հակառակորդները որակվում են «զոմբի» և «կուրացած». խարանի լեզուն այնքան խորն է արմատացած, որ վերարտադրվում է անգամ դրա դեմ ուղղված խոսքում: Այս փաստը թերևս ամենահամոզիչ վկայությունն է, որ խնդիրը անհատական «վատ դերակատարների» հարց չէ, այլ խոսույթային նորմի, որի փոփոխությունը պահանջում է համակարգային ջանք:

7. Դեպքերի ուսումնասիրություն

Սույն բաժնի դեպքերը կառուցված են ոչ թե առանձին հրապարակումների, այլ վարքագծային կրկնվող օրինաչափությունների շուրջ. յուրաքանչյուր դեպք նկարագրում է մեկ օրինաչափություն և հիմնավորում այն կորպուսից բերված մի քանի փաստագրված դեպքով՝ բնագրային մեջբերումներով: Մեջբերումները բերվում են փաստագրման նպատակով՝ առանց խմբագրման. դրանց բովանդակությունը կարող է վիրավորական լինել:

Դեպք 1. «Հոգեկան հիվանդը» որպես քաղաքական զենք

Օրինաչափությունը. հոգեկան առողջության ախտորոշումներն ու հոգեբուժական հաստատությունների մոտիվը կիրառվում են քաղաքական հակառակորդին ռացիոնալ դաշտից դուրս բերելու համար: Սա կորպուսի ամենազանգվածային օրինաչափությունն է. այս տրամաբանությամբ կոդավորվել է շուրջ երկու տասնյակ դեպք, և այն խստորեն համընդհանուր է. նույն լեզուն կիրառում են իշխանության, ընդդիմության ներկայացուցիչները, հոգևորականները, լրատվամիջոցները և օգտատերերը:

Փաստագրված դրսևորումներ.

> «Հոգեկան խնդիրներ ունեցող մարդիկ Հայաստանում վարչապետ չեն լինելու». ընտրվելու դեպքում խոստանում են «վերանորոգել Սևանի հոգեբուժարանը» վարչապետի համար. Նարեկ Կարապետյանը Նիկոլ Փաշինյանի մասին:
>
> Ֆեյսբուքյան տեսանյութ, 145,000 դիտում, 9,700 ռեակցիա

> «Այդ մարդը ցույց տվեց, որ առերևույթ հոգեկան խանգարումներ ունի» (Ռ. Քոչարյան՝ քաղաքական ընդդիմախոսի մասին). մեկնաբանություններում օգտատերերը հասնում են մահվան ցանկության:
>
> Ֆեյսբուքյան խմբի հրապարակում

> Պիկապի թափքից խոսելը «հոգեկանի մենաշնորհ» է (Ռ. Քոչարյան), «մոլագար», «հիվանդ» (Ի. Սաղաթելյան), «կնատյաց… հիվանդ բռնապետական հակումներ» (Ք. Վարդանյան), «գիժ» (հոգևորական):
>
> Քաղաքական դաշտի տարբեր բևեռների հայտարարություններ, NEWS.am, MAMUL.am, Panorama.am

> «Հոգեկան հիվանդ!» (անանուն էջի տեսանյութի վերտառություն, 54,000 դիտում), «Շիզոֆրենիկ անձնավորություն է» (TikTok, 31,200 դիտում), «Նիկոլ Փաշինյանի անվան հոգեբուժարան» (ծաղրական հրապարակում, 8,000+ դիտում):
>
> Անանուն էջեր և սոցցանցային հրապարակումներ

Վերլուծություն. այս օրինաչափության էությունն այն է, որ քաղաքական անհամաձայնությունը վերաձևակերպվում է որպես բժշկական խնդիր. հակառակորդի փաստարկները քննարկելու փոխարեն կասկածի տակ է դրվում նրա մտային «լիարժեքությունը»: «Հոգեբուժարանի» կրկնվող մոտիվը (Սևանի հոգեբուժարանի

վերանորոգում, տուգանքների ուղղորդում հոգեկան առողջության կենտրոնին) հոգեբուժական հաստատությունը խորհրդանշորեն վերածում է քաղաքական պատժի վայրի՝ վերակենդանացնելով հոգեբուժության պատժիչ կիրառման ամենամութ ասոցիացիաները: Կողմնակի վնասը երկշերտ է. նախ՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք լռելյայն հավասարեցվում են «անկառավարելի», «վտանգավոր», «իշխանության ոչ արժանի» կատեգորիային, ապա՝ ամրապնդվում է բուժօգնությունից խուսափելու սոցիալական դրդապատճառը, քանի որ ախտորոշումը հանրային խոսքում գործում է որպես խարան, ոչ թե բժշկական փաստ:

Դեպք 2. «Դեբիլ, տկարամիտ, դաուն». մտավոր հաշմանդամության եզրույթները որպես առօրյա հայհոյանք

Օրինաչափությունը. մտավոր զարգացման խնդիրներ նկարագրող բժշկական և սոցիալական եզրույթները («դեբիլ», «իդիոտ», «տկարամիտ», «մտավոր հետամնաց», «ծալապակաս», «դաուն», «թերզարգացած») գործում են որպես ունիվերսալ նվաստացման բառապաշար՝ ուղղված ցանկացած թիրախի՝ քաղաքական գործչից մինչև ընտրակաշառք վերցնող քաղաքացի: Կորպուսում այս օրինաչափությունն ընդգրկում է մոտ երկու տասնյակ դեպք:

Փաստագրված դրսևորումներ.

> «Տկարամիտ են, տգետ են, ախմախ են»՝ լրատվամիջոցի տեսանյութի վերնագիր *(139,000* դիտում *Facebook*-ում, ևս *3,400՝ TikTok*-ում*)*:
>
> Oragir.News

> Աժ փոխխոսնակը ընդդիմադիրներին որակում է «ծալապակաս» և «խփնված». նույն «ծալապակաս» եզրույթը հայտնվում է նաև ընդդիմադիր օրաթերթի հրապարակման մեջ՝ հակառակ ուղղությամբ:
>
> MediaHub.am, «Հայկական Ժամանակ»

> «Մտավոր Հետամնացների Միավորում»՝ ընդդիմադիր ուժերի հնարավոր դաշինքի «անվանումը» օգտատիրոջ գրառման մեջ. «տկարամիտ», «մտավոր հետամնաց», «դեգեներատ»՝ գործարարի և նրա թիմի հասցեին անանուն էջերում:
>
> Ֆեյսբուքյան հրապարակումներ

> «Դաուն» եզրույթը որպես հայհոյանք՝ բլոգերների և օգտատերերի տեսանյութերի վերնագրերում ու հեշթեգերում *(«Հա էլի դաուն», «#ԴԱՈՒՆ #ԵՆ»), 2,400–18,300* դիտում յուրաքանչյուրը:
>
> YouTube Shorts, Facebook

> Հանրային գործիչը ընտրակաշառք վերցնող քաղաքացիներին անվանում է «տկարամիտներ», իսկ կուսակցության պաշտոնական էջը իշխանությունների քայլերը որակում է «հիմար և տկարամիտ»:
>
> Ֆեյսբուքյան հրապարակումներ, այդ թվում՝ կուսակցության պաշտոնական էջ

Վերլուծություն. ի տարբերություն առաջին դեպքի, որտեղ խարանը հիմնականում «ախտորոշում» է, այստեղ մտավոր հաշմանդամության եզրույթներն արդեն

ամբողջությամբ կորցրել են բժշկական իմաստը և գործում են որպես կենցաղային հայհոյանք: Հատկանշական է, որ դրանք հնչում են ոչ միայն անանուն տիրույթից, այլև ինստիտուցիոնալ խոսափողերից՝ Աժ ամբիոն, կուսակցության պաշտոնական էջ, լրատվամիջոցի վերնագիր: «Դաուն» բառի կիրառումը որպես վիրավորանք առանձնահատուկ ծանր է. այն ուղիղ հարված է Դաունի համախտանիշ ունեցող անձանց և նրանց ընտանիքներին, որոնց ինքնությունը բառացիորեն վերածվում է հայհոյանքի: Այս օրինաչափությունը ցույց է տալիս նաև խարանի «ժառանգականությունը» քաղաքական ճամբարների միջև. նույն «ծալապակաս» եզրույթը շրջանառվում է և՛ իշխանական, և՛ ընդդիմադիր խոսույթում՝ փաստելով, որ խնդիրը ոչ թե կոնկրետ ուժի, այլ ընդհանուր խոսքային մշակույթի մեջ է:

Դեպք 3. Հաշմանդամությունը որպես սպառնալիք և պատիժ

Օրինաչափությունը. հաշմանդամ դառնալը ներկայացվում է որպես հնարավոր պատիժ, հաշվեհարդար կամ վատթարագույն հեռանկար: Քանակապես սահմանափակ (3-4 դեպք), սակայն բովանդակային առումով ամենավտանգավոր օրինաչափությունն է, քանի որ ընդգրկում է խոսքի ողջ ուղղահայացը՝ երկրի բարձրագույն ղեկավարից մինչև շարքային օգտատեր:

Փաստագրված դրսևորումներ.

> *«Եթե մեզ չընտրեք, անգործ կամ հաշմանդամ կդառնաք».* վարչապետի խոսքը լրագրողներին ճեպազրույցի ժամանակ՝ իշխանափոխության դեպքում նրանց սպասվող հեռանկարի մասին:
>
> Armlur, երկու առանձին հրապարակում

> *«…եթե մի անգամ էլ էջիս մեջ ոռնացիր՝ հաշմանդամ կսարքեմ… կզգաս ջանիդ վրա».* օգտատիրոջ ուղիղ սպառնալիքը հանրային դաշտում ակտիվ կնոջը՝ զուգակցված «պոռնիկ ծնվում են» սեքսիստական ձևակերպման հետ:
>
> Ֆեյսբուքյան գրառում, 3,600 դիտում

Վերլուծություն. երբ հաշմանդամությունը հնչում է որպես սպառնալիք, տեղի է ունենում կրկնակի բռնություն: Անմիջական թիրախի (լրագրողի, ակտիվիստի) նկատմամբ սա հոգեբանական ճնշում և ֆիզիկական հաշվեհարդարի ակնարկ է՝ ուղղված մասնագիտական կամ քաղաքացիական գործունեության զսպմանը: Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ սա խորքային ապամարդկայնացման փորձ է. նրանց ամենօրյա իրականությունը հանրությանը մատուցվում է որպես «պատիժ», «սարսափելի հեռանկար», մի բան, որով կարելի է վախեցնել: Փաստը, որ այս ձևակերպումներից մեկը հնչել է երկրի գործադիր իշխանության ղեկավարի շուրթերից՝ նախընտրական համատեքստում, իսկ մյուսը՝ շարքային օգտատիրոջից, ցույց է տալիս, որ «հաշմանդամությունը որպես պատիժ» պատկերացումը ներթափանցել է խոսքային մշակույթի բոլոր շերտերը: Ուշագրավ է նաև երկրորդ դեպքում խարանների խաչվող բնույթը. գենդերային նվաստացումը («պոռնիկ») և հաշմանդամության սպառնալիքը գործում են միասին՝ նույն թիրախի դեմ:

Դեպք 4. Փոխաբերական էյբլիզմ. «հաշմանդամ երկիր», «խուլ ու կույր» ինստիտուտներ, «անդամահատված» զինանշան

Օրինաչափությունը. հաշմանդամությունը կիրառվում է որպես անկարողության, անլիարժեքության և թերացման փոխաբերություն՝ պետության, ինստիտուտների, քաղաքականության կամ խորհրդանիշների «վատ վիճակը» նկարագրելու համար: Սա խարանի «ամենաակադեմիական» շերտն է. այն հնչում է առանց հայհոյելու մտադրության, հաճախ՝ կիրթ հանրային խոսքում, և հենց դրանով է վտանգավոր:

Փաստագրված դրսևորումներ.

> Խաղաղության պայմանագիրը «Հայաստանը հաշմանդամ դարձնող փաստաթուղթ» է, դրա կետերը երկիրը կդարձնեն «հաշմանդամ երկիր» (Է. Մարուքյան, երկու առանձին հրապարակում):
>
> PAN.am, քաղաքական գործչի Telegram-ալիք

> Իրավապահները «խուլ ու կույր» են ընտրակեղծիքների ձայնագրության նկատմամբ. իշխանությունները «քաղաքականապես խուլ և կույր» են (հանրային մտավորականի ձևակերպում):
>
> Region/Past.am, YouTube հաղորդաշար

> ՀՀ բանակի նախկին զինանշանի արծիվը պաշտոնական հիմնավորման մեջ որակվում է «անդամահատված»՝ հավասարեցվելով «անզոր, խոցելի» և բանակին ոչ հարիր վիճակի:
>
> 1lurer.am, Պաշտպանության նախարարության հիմնավորում

> Հայ ժողովրդի պատմական հիշողությունը քաղաքական գործչի գրառման մեջ որակվում է «գենետիկ զառամյալ հիշողություն»:
>
> Ֆեյսբուքյան հրապարակում

Վերլուծություն. փոխաբերական էյբլիզմը խարանի «լուռ» վերարտադրությունն է. այստեղ ոչ ոք ուղղակիորեն չի վիրավորում հաշմանդամություն ունեցող անձանց, սակայն լեզվական նորմը, ըստ որի «հաշմանդամ» նշանակում է «անլիարժեք», «խուլ ու կույր»՝ «անգործունակ», իսկ «անդամահատված»՝ «բանակին անհարիր», հենց այդ հավասարումներն է ամրագրում հանրային գիտակցության մեջ: Առանձնահատուկ խնդրահարույց է Պաշտպանության նախարարության դեպքը. պետական կառույցի պաշտոնական հաղորդակցության մեջ «անդամահատվածությունը» որակվում է որպես բանակի էությանը հակասող վիճակ՝ մի երկրում, որտեղ հենց պատերազմի հետևանքով անդամահատում տարած հազարավոր վետերաններ կան: Սա ինստիտուցիոնալ էյբլիզմի դասագրքային օրինակ է. խտրական ուղերձը գեներացվում է ոչ թե չարամտությունից, այլ զգայունության ինստիտուցիոնալ բացակայությունից, ինչը հատկապես հստակ ցույց է տալիս պետական հաղորդակցության լեզվական աուդիտի անհրաժեշտությունը:

Դեպք 5. «Պոռնիկ, բոզ, լիրբ». սեքսուալացված վիրավորանքը որպես ունիվերսալ քաղաքական արժույթ

Օրինաչափությունը. կնոջ սեռականությունը և «բարոյականությունը» թիրախավորող բառապաշարը գործում է որպես քաղաքական նվաստացման համապիտանի գործիք՝ ուղղված և՛ կանանց, և՛ տղամարդկանց, և՛ նույնիսկ պետություններին ու ինստիտուտներին: Կորպուսում այս օրինաչափությունն ընդգրկում է ավելի քան մեկ տասնյակ դեպք:

Փաստագրված դրսևորումներ.

> «Այ պոռնիկ, ինչքա՞ն են քեզ վճարել»՝ կնոջն ուղղված վիրավորանք վարչապետի մասնակցությամբ հավաքի ժամանակ *(90,000* դիտում*)*: «Սիրուշոն պոռնիկ ա»՝ հայտնի երգչուհու հասցեին *(13,400* դիտում*)*:
>
> YouTube, Facebook

> *«…*ասում են պոռնիկ չեն դառնում՝ պոռնիկ ծնվում են*…», «*բոզ պոռնիկ այլանդակ քած մեռնիիիի*…», «*պոռնիկ*», «*դիշովչկա*», «*սրա, նրա տակ մտնելով»՝ հանրային դաշտում ակտիվ կանանց հասցեին օգտատերերի գրառումներում:
>
> Ֆեյսբուքյան գրառումներ

> «Բոզի տղա»՝ ընտրակաշառք վերցնողների հասցեին բլոգերի գրառման մեջ *(112,000* դիտում*). «*մերդ բոզ ա*»՝* պաշտոնյաների, դատավորների ու քննիչների հասցեին *(12,000* դիտում*). «*լիրբ դիշովկա*» և «*անբարոյական կնոջ*» համեմատություն՝ տղամարդ քաղաքական գործիչների հասցեին:
>
> Facebook, YouTube

> «Եվրո-բոզ*», «*եվրոբոզեր*»՝* եվրոպացի պաշտոնյաների հասցեին. Հայաստանը որպես պետություն՝ «պոռնիկ ցեղ» *(*ռուսալեզու *Telegram*-գրառման վերահրապարակում*)*:
>
> Ֆեյսբուքյան գրառումներ, Pravda Հայաստան

Վերլուծություն. այս օրինաչափության ամենախոսուն կողմն այն է, որ սեքսուալացված վիրավորանքի թիրախների մեծ մասը… տղամարդիկ են: «Բոզի տղա», «մերդ բոզ ա», «լիրբ դիշովկա» ձևակերպումները տղամարդուն նվաստացնում են կնոջ միջոցով. վիրավորանքի ողջ բեռը կրում է կինը՝ մայրը, «անբարոյականը», որի սեռականությունը ենթադրաբար ամոթ է: Այսպիսով սեքսիստական լեզուն վերարտադրվում է անգամ այնտեղ, որտեղ կին թիրախ չկա. ամեն կիրառություն վերահաստատում է, որ կնոջ արժեքը նրա սեռական «մաքրությունն» է, և որ այդ «մաքրության» կասկածի տակ դնելը ունիվերսալ նվաստացում է: Երբ նույն տրամաբանությունը տարածվում է պետությունների վրա («պոռնիկ ցեղ», «եվրոբոզեր»), ակնհայտ է դառնում, որ գործ ունենք ոչ թե անհատական գռեհկության, այլ խոսույթը կազմակերպող պատրիարխալ կոդի հետ, որը նախընտրական մրցակցության պայմաններում ակտիվանում է որպես ամենահեշտ հասանելի «զենք»:

Դեպ 6. Կին լրագրողների լռեցումը

Օրինաչափությունը. կին լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտվում է գենդերային նվաստացման, սպառնալիքի և ֆիզիկական ճնշման համադրությամբ. հարձակումը միաժամանակ ուղղված է և՛ լրագրությանը, և՛ կնոջը:

Փաստագրված դրսևորումներ.

> Սպիտակի համայնքապետի տեղակալը քարոզարշավի ժամանակ հարվածում է «Ազատություն» ռադիոկայանի տեսախցիկին և վիրավորում կին լրագրողին. «Յեքա կնիկ ես…վարչապետն ա եկել»: Դեպքը լուսաբանվել է առնվազն երեք հարթակում. միայն «Ազատության» ֆեյսբուքյան տեսանյութը գրանցել է *669,000* դիտում՝ ողջ կորպուսի ռեկորդը:
>
> Ազատություն ռադիոկայան, Telegram-ալիքներ, YouTube

> Քաղաքական գործիչ Գեղամ Նազարյանը Կիրանցում հայհոյում և սպառնում է լրագրող Անի Գևորգյանին՝ նրան անվանելով «անբարոյական» և հայտարարելով, որ նա «բանտում է փտելու» (արձանագրված երկու առանձին լուսաբանմամբ):
>
> 24News, Makaryan News

> *Newday.am*-ի խմբագիր Անի Գևորգյանի բողոքի հիման վրա, ըստ որի՝ իշխանամետ ակտիվիստը խոչընդոտել, վիրավորել և հետապնդել է նրան, Քննչական կոմիտեն վարույթ չի հարուցել:
>
> «Հրապարակ» օրաթերթ

Վերլուծություն. այս օրինաչափությունում խտանում են զեկույցի բոլոր հիմնական գծերը: Նախ՝ հարձակվողների կազմը. պաշտոնյա, քաղաքական գործիչ, կուսակցական ակտիվիստ, այսինքն՝ հենց այն դերակատարները, որոնք կրում են խոսքի բարձրացված պատասխանատվություն: Երկրորդ՝ հարձակման կրկնակի կոդը. «Յեքա կնիկ ես» ձևակերպումը լրագրողի մասնագիտական ինքնությունը փոխարինում է գենդերային-կենցաղային պիտակով. կինը հանրային տարածքում «կնիկ» է, ոչ թե մասնագետ: «Անբարոյականը»՝ զուգակցված բանտի սպառնալիքին, գենդերային խարանին ավելացնում է պետական հարկադրանքի ակնարկ: Երրորդ՝ ինստիտուցիոնալ արձագանքի ձախողումը. վարույթ չհարուցելու փաստը ազդանշան է, որ կին լրագրողի նկատմամբ ոտնձգությունը մնում է անհետևանք: Չորրորդ՝ ընդգրկումը. դեպքերից մեկը դարձել է ողջ կորպուսի ամենադիտված նյութը, ինչը նշանակում է, որ հարյուր հազարավոր մարդիկ տեսել են, թե ինչ գին կարող է վճարել կինը մասնագիտական պարտականությունը կատարելու համար: Ընտրական շրջանում սա ուղիղ հարված է և՛ խոսքի ազատությանը, և՛ կանանց մասնագիտական մասնակցությանը:

Դեպք 7. Սեքսիզմը խորհրդարանական ամբիոնից

Օրինաչափությունը. գենդերային անզգայուն և սեքսիստական խոսքի աղբյուր են դառնում հենց օրենսդիր մարմնի անդամները, իսկ քաղաքական դաշտը պատասխանում է ոչ թե զսպվածությամբ, այլ սեքսիստական հակահարվածով. արդյունքում խորհրդարանական բանավեճը տեղափոխվում է կնոջ մարմնի դաշտ:

Փաստագրված դրսևորումներ.

> Կրծքով կերակրող մորը բերման ենթարկելու քննադատությանն ի պատասխան ՔՊ պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը հայտարարում է. «Անկախ մարդու կրծքերի զբաղվածությունից… երբեք կրծքերը և նրանց կիրառելիությունը կոնկրետ իրավիճակներում չեն կարող ինդուլգենցիա լինել», իսկ ընդդիմադիր կին պատգամավորին հորդորում է խոսել «տանձից ու խնձորից»: Դեպքը լուսաբանվել է առնվազն երեք հարթակում (17,856 դիտում միայն մեկ հրապարակմամբ):
>
> Aysor.am, Ազատություն ռադիոկայանի Instagram, YouTube

> Ի պատասխան՝ ՔՊ պատգամավոր Արսեն Թորոսյանը հրապարակում է. «Հետաքրքիր է՝ սեքսի նախարարն է ավելի շատ "զասոս դնում"…, որպեսզի որևէ չբավարարված կին, ինչու ոչ նաև տղամարդ, տանը չմնա» (11,200 դիտում). «սեքսի նախարարության» մոտիվը ծաղրական ձևաչափով շրջանառվում է նաև անանուն էջերում («որպեսզի անբավարարված կին չլինի»): Ի դեպ, սա ավելի վաղ շրջանառված թեզերի վերահիշատակում է, որոնք հանրային խոսույթի դաշտ էին բերվել ընդդիմադիր քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից:
>
> Ֆեյսբուքյան հրապարակումներ

Վերլուծություն. այս դեպքը ցույց է տալիս սեքսիզմի ինստիտուցիոնալ նորմալացման ամբողջական ցիկլը: Կնոջ մարմնի հետ կապված իրավապաշտպան խնդիրը (կրծքով կերակրող մոր բերման ենթարկումը) պատգամավորի խոսքում վերածվում է մարմնի մասերի մասին հեգնական ձևակերպման. քննադատությունը մերժվում է ոչ թե իրավական փաստարկով, այլ կնոջ մարմինը օբյեկտիվացնող լեզվով: Քաղաքական հակառակորդները, փոխանակ մատնանշելու ձևակերպման անընդունելիությունը, պատասխանում են սեփական սեքսիստական կոնստրուկցիայով («չբավարարված կին», «սեքսի նախարարություն»), որն արդեն ընտանիքի անդամներին է ներքաշում նվաստացման դաշտ: Երկու բևեռների այս «փոխհրաձգությունը» օգտատերերի համար բացում է ծաղրի լայն տարածք, ինչը արձանագրված է անանուն էջերի ածանցյալ բովանդակությամբ: Արդյունքում տուժում է ոչ թե բևեռներից որևէ մեկը, այլ կանայք որպես խումբ. խորհրդարանի մակարդակով ամրագրվում է, որ կնոջ մարմինը քաղաքական հեգնանքի լեգիտիմ նյութ է:

Դեպք 8. Ընտրության օրը. իրավունքից մինչև խոչընդոտ

Օրինաչափությունը. քվեարկության օրը հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքը բախվում է ինստիտուցիոնալ խոչընդոտների՝ տեղամասերի անմատչելիություն, այլընտրանքային քվեարկության մերժում, իսկ խոցելի կարգավիճակը դառնում է նաև հնարավոր շահարկման գործիք: Սա ատելության խոսքի «լուռ» շարունակությունն է. խոսույթը, որ հաշմանդամությունը ներկայացնում է որպես անլիարժեքություն, նյութականանում է որպես փաստացի բացառում:

Փաստագրված դրսևորումներ.

> Թիվ *14/19* ընտրատեղամասը անմատչելի է. քվեարկության սենյակը երկրորդ հարկում է, վերելակ և թեքահարթակ չկան: Վանաձորում տեղաշարժման դժվարություն ունեցող քաղաքացին չի կարողանում մտնել տեղամաս. մեկ այլ դեպքում անմատչելիության պատճառով քվեարկությունը տևում է *45* րոպե:
>
> Factor.am, «Քաղաքացու ձայնը» (երկու հրապարակում), «Հետք»

> Ընտրական հանձնաժողովը մերժում է շարժողական լուրջ խնդիրներ ունեցող տղամարդու այլընտրանքային քվեարկության հնարավորությունը՝ փաստացի սահմանափակելով նրա ընտրական իրավունքը:
>
> «Հրապարակ» օրաթերթ

> Ընտրախախտումների ահազանգերում նշվում է, որ «հաշմանդամություն ունեցող և տարեց անձանց օգնելու պատրվակով» հնարավոր է իրականացվել են քվեարկության ուղղորդումներ: ՄԻՊ թեժ գծի ահազանգերի թվում առանձին տեղ ունեն հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքների իրացման և տեղամասերի մատչելիության հարցերը:
>
> Yerevan.Today (երկու հրապարակում), Tert.am/ՄԻՊ ամփոփում

Վերլուծություն. այս դեպքը զեկույցի խոսույթային վերլուծությունը կապում է իրավունքների փաստացի իրացման հետ: Մատչելիության բացակայությունը պատահական թերացում չէ. այն նույն հանրային վերաբերմունքի ինստիտուցիոնալ արտահայտությունն է, որը խոսքի մակարդակում հաշմանդամությունը ներկայացնում է որպես «ուրիշի խնդիր»: Երբ պետությունը չի ապահովում թեքահարթակ, այն փաստացի կրկնում է խոսույթի ուղերձը. այս տարածքը ձեզ համար նախատեսված չէ: Միաժամանակ «օգնության պատրվակով ուղղորդման» ահազանգերը ցույց են տալիս մեդալի մյուս կողմը. հաշմանդամություն ունեցող անձինք ընտրական գործընթացում դիտարկվում են ոչ որպես ինքնուրույն քաղաքական սուբյեկտ, այլ որպես կա՛մ խոչընդոտվող, կա՛մ կառավարելի զանգված: Դրական է, որ այս դեպքերի մեծ մասը հանրայնացվել է հենց լրատվամիջոցների և քաղաքացիական հարթակների կողմից՝ առանց խարանող լեզվի. սա ցույց է տալիս, որ մեդիան կարող է լինել նաև իրավունքների պաշտպանության գործիք, երբ ընտրում է փաստագրող, ոչ թե խարանող օպտիկան:

8. Հարակից խոսույթներ

Կորպուսի 17 միավոր (14.8%) կոդավորվել է «Այլ» թիրախային ուղղությամբ. դրանք ուղղակիորեն չեն վերաբերում գենդերային կամ հաշմանդամության ուղղություններին, սակայն ձևավորում են այն ընդհանուր թունավոր խոսույթային միջավայրը, որում վերարտադրվում են նաև հիմնական ուղղությունների խարանները: Ստորև դրանց երեք հիմնական հոսքերն են:

8.1. ԼԳԲՏՔ+ համայնքի «քավության նոխազացումը»

Ընտրական խոսույթում սեռական կողմնորոշումը գործում է որպես քաղաքական հեղինակազրկման ևս մեկ գործիք. քաղաքական ուժին կամ գործչին «կապելը» ԼԳԲՏՔ+ համայնքի իրավունքների հետ ներկայացվում է որպես ինքնին վարկաբեկող փաստ: Telegram-ալիքները, օգտատերերն ու բլոգերները կիրառում են բացահայտ նվաստացուցիչ եզրույթներ («գյոթ», «ոռատուներ»), վրդովմունքի ու զզվանքի էմոջիներ, իսկ առանձին դեպքերում մեկնաբանությունները հասնում են մահվան ցանկության («Սատկեն և՛ նրանք, և՛ նրանք»): Դավադրապաշտական շերտում իրավապաշտպան ՀԿ-ի մասնակցությունը պետական խորհրդատվական մարմիններում ներկայացվում է որպես արևմտյան «գրավման» գործողություն՝ ուղղված «ազգային արժեքների քայքայմանը»: Հատկանշական է նաև սեռական ինքնության ծաղրական շահարկումը. քաղաքական գործչի «սեռի» վերաբերյալ հեգնական հարցադրումը և «տրանսգենդեր» եզրույթի կիրառումը որպես վիրավորանք: Այս խոսույթը կառուցվածքով նույնական է հիմնական ուղղություններում արձանագրվածին. խոցելի խմբի ինքնությունը ծառայում է որպես քաղաքական հարվածի միջոց, իսկ կողմնակի վնասը կրում է հենց այդ խումբը: Հետաքրքրական է, որ այս թեմաներով խուսույթները հաճախ համադրվում են հաշմանդամության, հիվանդ լինելու հանգամանքներով:

8.2. Ապամարդկայնացման լեզուն

Կորպուսում արձանագրված են քաղաքական հակառակորդի ապամարդկայնացման բացահայտ դեպքեր. երկրի ղեկավարը անանուն Telegram-ալիքում անվանվում է «շիմպանզե»՝ «հիվանդ ուղեղ» հավելումով, ԱԺ պատգամավորը հանրային բանախոսի խոսքում՝ «խտացրած խոզի միս» (ձևակերպումը շրջանառվել է առնվազն երեք հարթակում՝ YouTube, TikTok, ընդհանուր 20,000+ դիտումով), ընդդիմախոս պատգամավորի «մարդ» լինելը հոգևորականի խոսքում դրվում է չակերտների մեջ («թշնամուն ծառայող երևույթ»): Հանրային դաշտում ակտիվ կինը համեմատվում է «ագռավի», «մողեսի», «սատանայի» հետ: Ապամարդկայնացումը ատելության խոսքի ամենավտանգավոր աստիճանն է. թիրախին մարդկային կարգավիճակից զրկելը հոգեբանորեն «թույլատրելի» է դարձնում նրա նկատմամբ ագրեսիան: Այն, որ այս լեզուն հնչում է նաև հոգևորականի և հանրային մտավորականների շուրթերից, վկայում է բարոյական հեղինակություն ունեցող դերակատարների ներգրավվածության մասին խոսույթի կոշտացման մեջ:

8.3. Ազգային հիմքով թիրախավորումը և տեղահանվածների խարանումը

Արտաքին քաղաքական բևեռացումը կորպուսում արտադրում է ազգային-քաղաքացիական հիմքով վիրավորանքների առանձին հոսք. եվրոպացի պաշտոնյաները որակվում են «եվրո-բոզ», «եվրո չինովնիկ», Ուկրաինայի նախագահը՝ «տականք», «ծաղրածու», ռուսալեզու ալիքի վերահրապարակման մեջ Հայաստանը՝ «պոռնիկ ցեղ», իսկ ընդդիմախոսները՝ «թուրքի սերվածքներ», «բոշա բիոմասսա»: Առանձին մտահոգիչ դեպք է արցախցի տեղահանվածների խմբային խարանումը հանրային պաշտոնյայի ընտանիքի անդամի կողմից («խուլիգան», «թալանչի», «գողերի գերդաստան արտադրող», «լիրբ»). այստեղ տեղահանվածի կարգավիճակը՝ զուգակցված գենդերային վիրավորանքին, դառնում է հանցավորության կոլեկտիվ վերագրման հիմք: Արձանագրվել է նաև տարիքային խտրականության դրսևորում («գենետիկ զառամյալ հիշողություն»): Այս հոսքերը ցույց են տալիս, որ խարանող խոսքի մեխանիզմը ունիվերսալ է. փոխվում է միայն թիրախ խումբը, մինչդեռ կառուցվածքը՝ խմբային ինքնության վերածումը վիրավորանքի, մնում է նույնը:

9. Եզրակացություններ

1. **Խտրական խոսքը ընտրական շրջանում առաջին հերթին քաղաքական տեխնոլոգիա է:** Վերլուծված դեպքերի 79.1%-ի գործառույթը հեղինակազրկումն է, 59.1%-ի նարատիվային ֆոնը՝ բևեռացումը: Կանայք և հաշմանդամություն ունեցող անձինք տուժում են ոչ այնքան իրենց դեմ ուղղված նպատակային ատելությունից, որքան քաղաքական պայքարի լեզվից, որի «զինամթերքը» նրանց ինքնությունն է:
2. **«Կողմնակի խարանը» կորպուսի կենտրոնական մեխանիզմն է:** Հաշմանդամություն ունեցող անձինք ուղղակի թիրախ են 6, անուղղակի՝ 64 դեպքում (1:11 հարաբերակցություն): Խարանի հիմնական ծավալը գեներացվում է երրորդ անձանց դեմ խոսքում, ինչը այն դարձնում է «անտեսանելի» և՛ խոսողի, և՛ լսարանի համար:
3. **Էյբլիստական լեզուն համակուսակցական և բոլոր մակարդակներում ներկա նորմ է:** «Գիժ», «դեբիլ», «տկարամիտ», «դաուն», «քոռ» եզրույթները կիրառում են իշխանությունն ու ընդդիմությունը, պաշտոնյաներն ու հոգևորականները, ԶԼՄ-ները՝ ընդհուպ վերնագրերում, և շարքային օգտատերերը. առանձին դեպքերում էյբլիստական ձևակերպումներ են արձանագրվել նաև պետական պաշտոնական հաղորդակցության մեջ:
4. **Հաշմանդամությունը խոսույթում ամրագրված է որպես պատիժ և վատթարագույն հեռանկար:** «Հաշմանդամ կդառնաք / կսարքեմ» ձևակերպումները՝ երկրի բարձրագույն ղեկավարությունից մինչև շարքային օգտատեր, հաշմանդամությունը ներկայացնում են որպես սպառնալիքի գործիք, ինչը խորացնում է խմբի սոցիալական խարանը և բացառումը:
5. **Սեքսուալացված վիրավորանքը գործում է որպես ունիվերսալ քաղաքական արժույթ:** «Պոռնիկ», «բոզ», «լիրբ» լեքսիկոնը կիրառվում է կանանց, տղամարդկանց և նույնիսկ պետությունների դեմ՝ ամեն կիրառությամբ վերահաստատելով, որ կնոջ արժեքը հանգում է սեռական «մաքրությանը»:
6. **Կին լրագրողների և հանրային դաշտում ակտիվ կանանց վրա ճնշումը ստեղծում է լռեցնող էֆեկտ:** Պաշտոնյաների և քաղաքական գործիչների կողմից գենդերային նվաստացումը, սպառնալիքները և ինստիտուցիոնալ արձագանքի բացակայությունը բարձրացնում են կանանց հանրային մասնակցության «գինը» հենց այն շրջանում, երբ մասնակցությունը ամենակարևորն է:
7. **Խարանող բովանդակությունը մրցունակ է.** ամենաբարձր ընդգրկում ունեցող նյութերը հենց ամենախնդրահարույցներն են (մինչև 669,000 դիտում), մինչդեռ մեդիանային ընդգրկումը 972 դիտում է: Ալգորիթմային տրամաբանությունը պարգևատրում է սկանդալային խարանը, իսկ ԶԼՄ վերնագրային քաղաքականությունը հաճախ սպասարկում է այդ տրամաբանությունը:

8. **Մեկնաբանությունների դաշտը գործում է որպես խարանի ուժեղացուցիչ:** Հանրային դեմքի կամ ՁԼՄ-ի կողմից սահմանի խախտումը օգտատերերի համար գործում է որպես «թույլտվության ազդանշան»՝ բացելով առավել կոշտ խոսքի, ընդհուպ սպառնալիքների և մահվան ցանկությունների տարածք:
9. **Խոսույթային բացառումը ուղեկցվում է փաստացի ինստիտուցիոնալ բացառմամբ:** Ընտրության օրը արձանագրված անմատչելիության և այլընտրանքային քվեարկության մերժման դեպքերը ցույց են տալիս, որ խոսքի մակարդակի խարանն ունի նյութական շարունակություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակում:
10. **Հակախոսքի ներուժը կա, բայց թույլ է և ինքն էլ վարակված է խարանի լեզվով:** Խոսքի մշակույթը պաշտպանող եզակի հրապարակումները, այդ թվում՝ պատգամավորական մակարդակով, հաճախ իրենք են վերարտադրում պիտակավորումը, ինչը վկայում է, որ խնդրի լուծումը պահանջում է ոչ թե կետային դատապարտում, այլ խոսքային նորմի համակարգային փոփոխություն:

10. Առաջարկություններ

Ստորև ներկայացված առաջարկություններն ուղղակիորեն բխում են մշտադիտարկման տվյալներից և հասցեագրված են երեք հիմնական դերակատարների: Դրանց ընդհանուր տրամաբանությունն այն է, որ խտրական խոսքի նվազեցումը պահանջում է միաժամանակյա միջամտություն խոսքի արտադրության (քաղաքական դաշտ), բազմապատկման (մեդիա) և նորմավորման (պետություն, քաղհասարակություն) օղակներում:

10.1. Լրատվամիջոցներին

1. **Վերանայել վերնագրային քաղաքականությունը:** Մշտադիտարկումը փաստում է, որ խարանող ձևակերպումները («տկարամիտ», «շիզոֆրենիկ», «խուլ ու համրեր») հաճախ հայտնվում են հենց վերնագրերում՝ ապահովելով առավելագույն ընդգրկում: Խմբագրությունները պետք է ընդունեն կանոն. խարանող մեջբերումը վերնագրում տեղ է գտնում միայն հստակ խմբագրական միջամտությամբ (չակերտում, վերագրում, համատեքստ), իսկ սեփական խոսքում նման եզրույթները բացառվում են:
2. **Ներդնել հաշմանդամության և գենդերի թեմաներով խմբագրական ուղեցույց և եզրույթների բառարան:** Ուղեցույցը պետք է ներառի հոգեկան առողջության, մտավոր և ֆիզիկական հաշմանդամության կոռեկտ եզրութաբանությունը, ինչպես նաև մերժվող փոխաբերությունների ցանկը («խուլ ու կույր» ինստիտուտներ, «հաշմանդամ երկիր» և այլն):
3. **Քաղաքական գործիչների խարանող խոսքը լուսաբանել որպես խնդիր, ոչ որպես սենսացիա:** Մեջբերելիս ավելացնել համատեքստ այն մասին, թե ինչու է ձևակերպումը խտրական և ո՛ւմ է այն կողմնակիորեն վնասում. այդպես լուսաբանումը խարանի բազմապատկումից վերածվում է հանրային կրթության:
4. **Ուժեղացնել մեկնաբանությունների մոդերացիան սեփական էջերում:** Տվյալները ցույց են տալիս, որ ՁԼՄ հրապարակումների մեկնաբանություններում խոսքը կտրուկ կոշտանում է՝ հասնելով սպառնալիքների: Խմբագրությունները պատասխանատու են իրենց հարթակներում ծավալվող խոսույթի համար. անհրաժեշտ են հստակ համայնքային կանոններ և բովանդակության մոդերացիայի իրականացում:
5. **Շարունակել և ընդլայնել իրավունքահեն լուսաբանումը:** Ընտրատեղամասերի անմատչելիության և ընտրական իրավունքի խախտումների փաստագրումը կորպուսի դրական օրինակն է. այս օպտիկան՝ փաստագրող, ոչ խարանող, պետք է դառնա խոցելի խմբերի լուսաբանման ստանդարտ:

10.2. Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին

1. **Ինստիտուցիոնալացնել ընտրական շրջանների մեդիա մշտադիտարկումը:** Սույն ուսումնասիրության մեթոդաբանությունը (ԱԲ գործիքներ + որակական կոդավորում + ուղղակի/անուղղակի թիրախավորման տարբերակում) կարող է կիրառվել կանոնավոր ցիկլով՝ ստեղծելով համադրելի տվյալների շարք ընտրությունից ընտրություն:
2. **Թիրախավորել «կողմնակի խարանի» իրազեկումը:** Հանրային արշավները սովորաբար կենտրոնանում են ուղղակի ատելության խոսքի վրա, մինչդեռ տվյալները ցույց են տալիս, որ վնասի հիմնական ծավալը անուղղակի է. անհրաժեշտ են արշավներ, որոնք բացատրում են, թե ինչու «դեբիլ» կամ «դաուն» ասելը հարվածում է ոչ թե հակառակորդին, այլ խոցելի խմբերին:
3. **Աշխատել քաղաքական կուսակցությունների հետ խոսքի վարքականոնների շուրջ:** Առաջարկել կուսակցություններին նախընտրական շրջանի համար կամավոր վարքականոն՝ խարանող լեզվի բացառման պարտավորությամբ, և հրապարակային մշտադիտարկել դրա պահպանումը՝ «անվանել և ցույց տալ» սկզբունքով՝ համաչափ կիրառելով այն բոլոր ուժերի նկատմամբ:
4. **Աջակցել թիրախավորված անձանց, հատկապես կին լրագրողներին:** Իրավաբանական աջակցության, փաստագրման և հոգեբանական սատարման մեխանիզմներ՝ պաշտոնյաների և քաղաքական գործիչների կողմից ոտնձգությունների դեպքերում, ներառյալ ռազմավարական դատավարության հնարավորությունների գնահատում, երբ իրավապահ արձագանքը բացակայում է:
5. **Զարգացնել հակախոսքի դրական մոդելներ:** Կորպուսում արձանագրված հակախոսքի թույլ, բայց իրական ներուժը (խոսքի մշակույթը պաշտպանող հրապարակումներ) ցույց է տալիս աշխատանքի ուղղություն. պատրաստել հանրային խոսնակների, ովքեր կարող են արձագանքել խարանող խոսքին՝ առանց վերարտադրելու դրա լեզուն:
6. **Շահերի պաշտպանության գործողություններ:** Նախաձեռնել և իրականացնել շահերի պաշտպանության գործողություններ՝ ուղղված տեղական օրենսդրության լրամշակմանն ու լավարկմանը, որտեղ ատելության խոսքի, ոչ զգայուն քաղաքական խոսքի դեմ պայքարի մեխանիզմներն ու հակակշիռները կիրառելի կլինեն հանրային խոսքում և վերահսկելի՝ մշտադիտարկումների միջոցով:

10.3. Պետական ինստիտուտներին

1. **Իրականացնել պետական հաղորդակցության լեզվական աուդիտ:** Պետական կառույցների պաշտոնական տեքստերում էյբլիստական ձևակերպումների արձանագրված դեպքերը ցույց են տալիս ներքին ուղեցույցների անհրաժեշտություն. բոլոր պետական մարմինների հանրային հաղորդակցությունը պետք է անցնի հաշմանդամության և գենդերային զգայունության ստուգում:

2. **Ապահովել ընտրական գործընթացի լիարժեք մատչելիությունը:** Ընտրության օրվա արձանագրված դեպքերը (երկրորդ հարկում գտնվող տեղամասեր, թեքահարթակի բացակայություն, այլընտրանքային քվեարկության մերժում) պահանջում են համակարգային լուծում. տեղամասերի մատչելիության պարտադիր նախընտրական աուդիտ, անմատչելի տեղամասերի արգելք և շարժունակության խնդիրներ ունեցող ընտրողների քվեարկության հստակ, գործող ընթացակարգ: Մատչելիացնել ընտրատեղամասի փոփոխության դիմումների ընդունման ընթացակարգը հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ ելնելով քաղաքացու լավագույն շահի սկզբունքից:
3. **Ապահովել արդյունավետ իրավական արձագանք լրագրողների նկատմամբ ոտնձգություններին:** Պաշտոնյայի կողմից կին լրագրողին վիրավորելու ու խոչընդոտելու և վարույթ չհարուցելու արձանագրված դեպքերը խաթարում են և՛ խոսքի ազատությունը, և՛ իրավունքի գերակայության նկատմամբ վստահությունը. անհրաժեշտ է նման դեպքերի առաջնահերթ, թափանցիկ քննություն՝ անկախ ոտնձգություն կատարողի պաշտոնական դիրքից:
4. **Ամրապնդել խորհրդարանական էթիկայի մեխանիզմները:** Աժ ամբիոնից և պատգամավորների հանրային հաղորդակցությունից հնչող սեքսիստական ու էյբլիստական ձևակերպումների արձանագրված դեպքերը հիմք են էթիկայի կանոնների հստակեցման և կիրառելի ընթացակարգերի համար՝ ներառյալ խտրական խոսքի հստակ սահմանումը որպես էթիկայի խախտում:
5. **Վերանայել ատելության խոսքի իրավական շրջանակը՝ խտրականության հիմքերի լիարժեք ընդգրկմամբ:** Հաշմանդամության և գենդերի հիմքով խարանող խոսքի համատարածությունն ու դրա ինստիտուցիոնալ աղբյուրները ցույց են տալիս, որ գործող կարգավորումները կանխարգելիչ ազդեցություն չունեն. անհրաժեշտ է գնահատել օրենսդրական և ինքնակարգավորման գործիքների համադրությունը՝ խոսքի ազատության երաշխիքների պահպանմամբ:
6. **Ներդնել հանրային կրթական բաղադրիչ:** Մեդիագրագիտության պետական ծրագրերում ներառել «կողմնակի խարանի» թեման. քաղաքացիները պետք է կարողանան ճանաչել, որ խոցելի խմբի ինքնությամբ կառուցված վիրավորանքը խտրականություն է՝ անկախ անմիջական թիրախից:

Սույն զեկույցի տվյալները միանշանակ ցույց են տալիս, որ 2026թ. ընտրական շրջանի հայաստանյան տեղեկատվական դաշտում կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվությունը դարձել է քաղաքական պայքարի սպառվող ռեսուրս: Այս իրավիճակի փոփոխությունը ո՛չ մեկ դերակատարի, ո՛չ մեկ օրենքի խնդիր է. այն պահանջում է խոսքային նորմի համակարգային վերակառուցում, որին պետք է մասնակցեն խոսքի արտադրության, բազմապատկման և նորմավորման բոլոր

օղակները: Մինչ այդ ամեն «գիժ», «դեբիլ» և «պոռնիկ», որ հնչում է քաղաքական ամբիոնից, եթերից կամ ստեղնաշարից, շարունակելու է հարվածել ոչ թե քաղաքական հակառակորդին, այլ նրանց, ովքեր այդ պայքարի կողմ անգամ չեն: